

# Իշխանութիւն-ժողովուրդ երկխօսութիւնը վերջ չունի

1988թ. տարբեր առիթներով, երբ արցախեան շարժման ղեկավարները յայտարարում էին, թէ իշխանութեան չեն ձգտում, հազիւ գուշակէին, որ ընդամենը երկու տարուց հասնելով «վերին բարձունքին» վերջինիս տրամաբանութեամբ, յայտնուելու են իրենց իսկ զլխաւորած շարժմանը դէմ-յանդիման եւ ճշտուելու են նրա հետ յարաբերութիւններ ճշտելու մի երկխօսութեան մէջ, որը գուցէ թէ վերջ չունի:

88թ. շարժման ղեկավարները ստիպուած լինելով պաշտպանուել նաեւ թիկունքին խփողից, հենց այն ժամանակ «հարթակից վայր հրեցին» համայնավարի տոմսով ընկերային սանդղակի միջին աստիճանում գտնուող ոչ միջակ մտաւորականին (յիշենք ինչպէս ենք 70 տարի փնտլել բոլշեւիկներին, յեղափոխութիւնից յետոյ հին կադրերի նկատմամբ վարած քաղաքականութեան համար), ուրիշի մտքերն անվերապահօրէն չընդունողին: Ինքն իրենից կենսական հիւթերը քամելով «շարժում»ն, արդէն ՀՀԾի երկրորդ համագումար ներկայացաւ «այն տեսքով», որից դատելով, երկար կեանք նրա համար, գոնէ որպէս քաղաքական առաջատար կազմակերպութեան՝ չէիր կարող ենթադրել: Եւ այլեւ ՀՀԾն չէ, որ պէտք է դառնար իր ստեղծած իշխանութեան նեցուկը, այլ՝ հակառակը: Համահայկական քաղաքական «նուագարանի» վերջին ստեղծը «զեղական կարգով» ջարդուփրչուր արուեց ՀՀԾի երկրորդ համագումարում, ազգայնական խմբի կողմից ֆրակցիա ստեղծելու գաղափարի «օտարութիւնով»:

88 թուականին ձեւաւորւած, հզօր ուժ ներկայացնող քաղաքական հոսանքը 90 թուականին ներկայացաւ մեզ որպէս գաղափարախօսութիւն հրաձցուող, Անկախ պետականութեան հաստատման կարգախօսով եւ կառուցուածքային թոյլ համակարգով:

Ի հարկէ, կազմակերպական կառոյցի հարցում միշտ էլ կարելի է ընդօրինակել գործնականում կիրարկուած գտած յաջող օրինակները, սակայն այդ մեխանիզմի ծուծքը կազմող գաղափարախօսութիւնն է, որ ոչ կ'ընդօրինակես եւ ոչ էլ կը յօրինես: Վերջինիս կաղապարումը տեղի է ունենում ներքին ու արտաքին ազդակների առկայութեամբ, ազգային մտածողութեան սաղմնաւորման ու զարգացման շատ յաճախ մի երկարատեւ գործընթացում, որից յետոյ ցեմենտում է ծրագրային հիմք կազմող փիլիսոփայական միտքը: Երկու տարի կանգնած լինելով այս բարդութեան առաջ եւ խուսանաւելով շարժման կազմակերպութեան արանքում, ՀՀԾ նոյն երկրորդ համագումարում Վ.Սիրադեղեանը, արտայայտուելով սրանցից առաջինի օգտին ասաց. «Մեր ուժը մեր անորոշ, անկազմակերպ վիճակի մէջ է»: Այսինքն, խուսափելով թոյլ ոսկորներով առողջ օրգանիզմ ստեղծելու գաղափարից, ընտրուած է երկրորդ ճանապարհը՝ շարունակել գործունէութիւնը, մնալով շարժման նախնականութեան փուլում: Վերոյիշեալ օտարութիւնների պատճառով «ներքեւներում» չունենալով ամուր յենասիւններ, շատ շուտով նոր իշխանութիւնները հասկացան, որ պետութեան զլուխը կազմող

խորհրդարանը կարող է դառնալ մի իւրատեսակ դեկ, որի պտոյտներից անկախ, հանրապետութիւնը ինտրոյստով կը շարունակի ընթանալ նախկին ուղղութեամբ:

Սպառնացող ճգնաժամից ելքի որոնումներում, մեր աչքի առաջ իշխանութեան վերածուած ժողովրդական շարժումը կամաց-կամաց սեղմում է ըսպառնալով վերածուել բռնատիրական բռունցքի:

Պէտք է նկատել, որ խորհրդային կայսրութեան ժողովրդավարական շարժումները ներկայ փուլում, հիմնականում, նոյն արդիւնքին են յանգեցրել: Հանրապետութիւնների մասշտաբով, նոր տիպի բռնատիրական համակարգերի առաջացման օրինաչափութիւնը հարկ է առաջին հերթին բացատրել տեղերում կայսերական կենսունակ լծակների դէմ ընդդիմութեան հակազդեցութեամբ, ինչպէս եւ անցեալից մնացած բարոյա-հոգեբանական յատկանիշների ժառանգմամբ:

Աթափ հայեացքը յուշում է, որ օգտուելով խորացող հակամարտութեան ստեղծած քառասային վիճակից, իրադարձութիւնների նման զարգացումների դէպքում Մոսկուան տեղական դրածոների ձեռքով մեր գլխին ազգային փրկութեան կոմիտէի հայկական տարբերակը կարող է սարքել եւ դրանով հեռաւոր տասնամեակների զիրկն ուղարկել Ազատ-Անկախ Միացեալի գործընթացը:

Այս պայմաններում, մեր կարծիքով, փոխդիման պէտք է գնան բոլորը եւ ոչ ոք չփորձի սեփական կամքը թելադրել, մանաւանդ որ ներկայ գործող ուժերից եւ ոչ մէկը չունի այն իրականացնելու համար ան-

հրաժեշտ հիմքերը, որոնք են՝ հզօր կայսրութեան տնտեսաֆինանսական, ռազմա-քաղաքական հովանաւորութիւն, քաղցկեղի պէս կեանքի բոլոր ոլորտներում արձատացած կուսակցական ցանց ու նաեւ՝ խմբային շահը ազգայինից վեր դասելու ապագային դիրքորոշում: Մասնաւորապէս իշխանութիւնը պէտք է շժոռանայ ողջ հայութեան շահերն արտայայտողի պարտականութիւնը, նոյնիսկ այն դէպքում, երբ վերջինիս գրեթէ ողջ բարձրագոյն ղեկավարութիւնը անցեալի օրինակով հանդիսանում է միաժամանակ մէկ քաղաքական կազմակերպութեան (ՀՀԾ) ղեկավար մարմին:

Չժոռանաք նաեւ, որ ամենամօտ ապագայում չեն բացառում ընկերային նոր պայթիւնները հանրապետութիւնում, որ կարող են ծագել «Նաիրիտ» ԳԱՄի բացման, արցախեան կնճռի, հողային ռեֆորմների կիրարկման, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ, դեռ օրահարց չզարձած խընդիրների հետ բախուելիս:

Ներկայ փուլի վտանգաւոր խորխորատից յաջող եւ արագ թոխք կարելի է կատարել, եթէ անցման շրջանից լիակատար ժողովրդավարութիւն, այն է՝ ազգային պետութեան ստեղծում, անցումը լինի սահուն եւ ոչ կտրուկ միջոցներով: Կուսակցութիւնների, քաղաքացիութեան, մամուլի ու զանգուածային տեղեկատրութեան միջոցների, հանրաքուէի, խղճի, դաւանանքի ու կամքի աղատ արտայայտման եւ մարդու իրաւունքները սահմանազժող օրէնքները,

որքանով որ ձերբազատուած լինեն «չթոյլատրել» ներկայ անկատար դերբայի փշալարերից, այնքանով արագօրէն առանց վտանգաւոր ցնցումների, բոլոր քաղաքական ու ոչ քաղաքական կազմաւորումները (որոնք, ի վերջոյ, ընդգրկելու են ողջ հանրապետութիւնն ու հայ ժողովրդին), կ'ընդգրկուեն պետութեան կառավարման գործում: Կը համախմբուեն՝ կենտրոնուած ունենալով բազմաձայն ազգային խորհրդարանը: Յիշենք՝ անկախութեան հռչակագիր ընդունած, անցման շրջանում տասնամեակներով տարուբերուող լատինամերիկեան, ասիական ու աֆրիկեան այն երկրները, ուր ամէն հարբած զեներալ, առաւօտեան շուտ արթնանալով, կարող է յեղաշրջում իրականացնել, որից տուժում է ողջ ժողովուրդը եւ օգտուում է միայն օտար եւ աներեւոյթ ձեռքը: Յիշենք անցեալի դասերը, եւ սառը ցնցուղի տակ սթափուելով յեղափոխական կրքից, մտածենք, թէ ինչպէս անենք, որ կարողանանք խոյս տալ թէ՛ բուլչեիկեան մուրճից, եւ թէ՛ թուրքական սալից: